

մարեցուցած է որ խեղճ Եւայի քունը դարձեալ բերեն: Երևի Հէնց այս ազգեցութիւնն էլ ունեցան նոյն խօսքերը, քանի որ նորա ամուսինը՝ այժմ հանգստացնել ուզենալով՝ աւելացնում է, ճիշդ որպէս մի երգուեալ խղճավարիչ (կազուխտ). «Մի արամիր, չարը կարող է անգիտութեամբ գալ և անյայտանալ Աստուծոյ և մարդու հոգու մէջ, չը թողնելով ոչ բիծ և ոչ խղճահարութիւն » \* ):

(Շարժումներ): (Թարգ.) Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ

Ազգային ընդհանուր ժողովոյ յունիս 5ի նստին մէջ ատենական գործողութիւններէ յետոյ կարգացուեցաւ եկեղեցական Համագումար ժողովոյ տեղեկագիրն որ կը հաղորդէր նորոգ Կրօնական ժողովոյ համար պատրաստեալ ընտրելաց եռապատիկ ցանկն:

Ատենապետ Բժ. Յ. Թիրեաքեան էֆէնտիի հրաւիրանօք սոյն ցանկին վրայ գաղտնի քուէարկութիւն կատարուեցաւ 44 երեսփոխանաց մասնակցութեամբ և Կրօնական ժողովն կազմուեցաւ հետեւեալ կերպիւ.

	քուէ
1. Գեր. Խորէն Արք - Եպիսկոպոս Նար - Պէյ	33
2. , Սիմէօն Եպիսկ. Սէֆէրեան . . . . .	30
3. , Գարեգին Եպիսկ. Սրուանձտեանց . . . . .	29
4. Արժ. Յովսէփ վարդապետ Այվազեան . . . . .	37
5. , Յովհաննէս վարդապ. Արշարունի . . . . .	30
6. , Յակոբ վարդապ. Ա. Փափազեան . . . . .	26
7. , Վահան վարդապ. Յակոբեան . . . . .	32
8. , Տաճատ վարդապ. Ոսկանեան . . . . .	27
9. , Սահակ Ա. քահանայ Տ. Սարգսեան . . . . .	31
10. , Յովհաննէս Աւագ քահանայ Մկրեան. . . . .	30
11. , Գրիգոր Ա. քահանայ Աճէմեան . . . . .	28

\*) Բայց մի արամիր, չարն երթայ և գայ յէին միտս և մարդոյն Առանց նոցին հաճութեան, և չարկանէ բիծ կամ ըստգիւտ:

Սոյն տասն - մէկ անդամք միայն ըստացած լինելով բացարձակ առաւելութիւն, մնացեալ ընտրելեաց մէջէն առաւելագոյն քուէ ստացող վեց անուանց վերայ համեմատական քուէարկութիւն կատարուեցաւ: Սոյն քուէարկութեան մասնակցեցան 26 երեսփոխանք և Կրօնական փողովոյ անդամ ընտրուեցան՝

12. Արժ. Վահան վարդապ. Մինասեան	.	19
13. " Սուքիաս Ա. Քահ. Ստեփաննոսեան	.	22
14. " Կարապետ քահանայ Սեթեան	.	18

Ատենապետ էֆէնտի յանուն փողովոյ շնորհաւորելով նորընտիր Կրօն. փողովն, ատեննը փակեց: (Արևելք)

Յունիս 29 թուականով Կոստանդնուպոլսէ տրուած մի հեռագիր կը ծանուցանէ թէ Կոստանդնուպոլսոյ Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Ս. Արքեպիսկոպոսի Երուսաղեմայ պատրիարքութեան ընտրութիւնը և հետևաբար Կոստանդնուպոլսոյ պատրիարքութենէն հրաժարականը Վեհ. Սուլթանի հաճութեամբ հաստատուած է:

## ՊԼՅՏՕՆԱԿԱՆՔ

ԳԱՂՈՒԱՄՔ.

2 Մայիսի. — Ս. Սինօղը հիմնուելով Երևանայ Կոնսիստորիայի յայտարարութեան վերայ, ընդ համարաւ 1152, 13 ապրիլ. Կարուց նահանգի Գեաղուկ Սաթլմիշ գիւղի ծխատէր Աւետիս Կիրակոսեան քահանային նորա անվայել վարուց և բարուց համար վճուեց ենթարկել ապաշխարանաց երկամսեայ ժամանակաւ ի Զուգավանս (Ղօշավանք), ի խրատ ինքեան և ի զգուշութիւն այլոց քահանայից: